

ՄԵՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հրապարակաւ կը մատուցանենք ի սրտէ առ Ն. Բ. Իշխան Ա. Ապրոյ Բագրաստունի, որ Միաբանութեանս նուիրեց՝ 1⁰ իր ընտանեաց մէկ յարգի սեփականութիւնը՝ մագաղակեայ ձեռագիր ԱՍՏՈՒԱՅԱՇՈՒՆ ԲՆ (27 × 20 [20 × 14]), վեց տարուան մէջ գրուած՝ « Ձեռամբ. իրովցի Յակոբ սարկաւագի » ի Պոլիս, « ընդ հովանեաւ Ռուսականո տաճարի սրբոյն Նիկողայոսի հայրսպետի » ի Թուականին ՌՂԶ (= 1647): Ձեռագիրս յոյժ գեղեցիկ է եւ բազմաթիւ նկարներով եւ լուսանցազարդերով ճոխացած: Ծաղկողն է Տէր Աբրահամ քահանայ: 2⁰ ՈՍԿԵԳՐԱՄ մը, որոյ վրայ քանդակուած է լատին լեզուաւ. « Գուկիոս վերոս Թագաւորեցուցանէ Հայոց զՍոյեմոս յամի 164 »: Բնական մեծութիւն՝ 0, 018: Ոսկեդրամս նուէր է Մարգարիտա Մայր-Թագուհւոյն Խտալիոյ առ Իշխանուհին Մեղանիա Ապրոյ Բագրաստունի՝ Տիկին Իշխան Արսլան Ապրոյի:

— Առ Մեծ. Ա. Ա. որ ընծայեց վրացերէն լեզուով ձեռագիր փոքրիկ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ մը. մեծութիւն՝ $5\frac{1}{2} \times 4\frac{1}{8}$ [(3.7 × 2.8)]:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Նկատելով որ այս վերջին ժամանակներս Հայ երիտասարդներ վենետիկ կու գան յատուկ դիտաւորութեամբ Մուրատ—Թափայէլեան վարժարանիս մէջ ընդունուելու, սակայն առանց նախապէս Տեսչութեան հետ թղթակցելու և անոր հաւանութիւնը առած ըլլալու, հարկ կը համարինք հրապարակաւ ծանուցանելու՝ թէ մինչև այսօր ոչ ոք անոնցմէ ընդունուած է և ոչ ոք պիտի ընդունուի: Ուստի թշուառութեան պիտի մատնուին այն ամէն երիտասարդները՝ որոնք ճամբայ կ'ելլեն դէպ ի վենետիկ՝ առանց միտ գնելու մեր այս ազգաբարոյթեան և վարժարանիս միտ կառուր պայմաններուն, որ կը զրկուին ուղեգնէրուն:

Մեծապէս շնորհակալ պիտի ըլլանք մեր Պատ. ազգային Թերթերուն՝ եթէ հաճին արտա. տպել մեր այս Յայտարարութիւնը:

Տեսչութիւն

Մ. - Ռ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Վենետիկ

Կը խնդրուի մեր պատուական բաժանորդներէն՝ որ տարւոյս ընթացքին մէջ հասցէի որեւէ փոփոխութիւն հաճին կանխապէս հաղորդել խմբագրութեանս:

Յանձնարարեալ (Recommandé) ծրարով ստանալ փափագողք պէտք է յաւելուն բաժնեկցոյն վրայ գաղղ. Ֆր. 5:

Խմբագրութիւնս պատասխանատու չէ որեւէ կորուստի՝ յետ կարեւոր եղած խնամքով առաքումները կանոնաւորապէս կատարելու: